

Էկոլոգիական կառավարման համակարգեր

(թեսթավորման հարցաշար)

N	Հարցեր	Պատասխաններ
1	2	3
1.	Էկոլոգիական գործոնները ըստ իրենց ազդեցության բնույթի քանի՞ դասի են բաժանվում	1. Մեկ 2. Երկու 3. Երեք
2.	Ո՞ր էկոլոգիական գործոններն են հանդիսանում կենսոլորտի կարգավորիչ գործոններ	1. Աբիոտիկ 2. Բիոտիկ 3. Սարդածին
3.	Կենսոլորտի էկոլոգիական վիճակի վրա մարդածին ներգործության ո՞ր գործոնն է արտահայտում արդյունաբար վնասակար ազդեցությունը	1. Ջանգված 2. Էներգիա 3. Էնտրոպիա
4.	Հետևյալ մեծություններից ո՞րն ունի էնտրոպիայի չափողականություն	1. Էներգիա X ջերմաստիճան (EXT) 2. Ջերմաստիճան/էներգիա (T/E) 3. Էներգիա/ջերմաստիճան (E/T)
5.	Էկոհամակարգի էկոլոգիական վիճակի լարվածությունը էկոլոգիական գործոնների արժեքների ի՞նչպիսի շեղվածությամբ է որոշվում	1. Իրենց օպտիմումից 2. Իրենց վերին սահմանից 3. Իրենց ներքին սահմանից
6.	Նյութերի բիոտիկ շրջանառության հավասարակշռության խախտման դեպքում առանց մարդու միջամտության ի՞նչ է տեղի ունենում կենսոլորտում	1. Նյութերի էմիսիա մթնոլորտ 2. Նյութերի կուտակումներ 3. Նյութերի համասեռ բաշխում
7.	Շրջակա միջավայրի պահպանության համար սահմանված ո՞ր էկոլոգիական նորմատիվներն են բոլորի համար բացարձակ	1. Շրջակա միջավայրի որակի էկոլոգիական նորմատիվները 2. Շրջակա միջավայրի որակի վրա ներգործության էկոլոգիական նորմատիվները 3. 1-ը և 2-ը միասին
8.	Շրջակա միջավայրի վրա կազմակերպության ո՞ր ազդեցությունները կարող են լինել էկոլոգիական բացասական ներգործություններ	1. Արտանետումները, արտահոսքերը, թափոնները 2. Բնական պաշարների՝ նյութերի, էներգիայի, ջրի անհավասարակշռված օգտագործումը 3. 1-ը և 2-ը միասին
9.	Ո՞ր դեպքում է լիազորված պետական մարմինը հաստատում կազմակերպության կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա էկոլոգիական ներգործության սեփական նորմատիվը	1. Ներգործության նորմատիվը մեծ է շրջակա միջավայրի էկոլոգիական որակի համապատասխան նորմատիվից 2. Ներգործության նորմատիվը հավասար է շրջակա միջավայրի էկոլոգիական որակի համապատասխան նորմատիվին 3. Ֆոնայինի հետ միասին չի գերազանցում շրջակա միջավայրի էկոլոգիական որակի համապատասխան նորմատիվից
10.	Ո՞ր նորմատիվ փաստաթղթերում են սահմանված շրջակա միջավայրի պահպանության պարտադիր պահանջները	1. «Բնության պահպանություն» ՊՕՍ 17.0.0.00- շարքի ստանդարտներում 2. «Էկոլոգիական կառավարում» ՀՍՏ ԻՍՕ 14000-շարքի ստանդարտներում 3. 1-ում և 2-ում միասին
11.	Շրջակա միջավայրի պահպանության պարտադիր պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողությունն ու՞մ կողմից է իրականացվում	1. Բնապահպանության և Առողջապահության նախարարությունների և նրանց ենթակառույցների 2. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ 3. 1-ը և 2-ը միասին

1	2	3
12.	Դիցուկ C_o – մթնոլորտային օդում վտանգավոր նյութի (կամ այլ գործոնի) սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է, C – մթնոլորտային օդի երկրամերձ շերտում այդ նյութի առաքման աղբյուրի կողմից առաջացրած կոնցենտրացիան է, C_{Φ} – մթնոլորտային օդում այդ նյութի ֆոնային կոնցենտրացիան է: Ո՞ր առնչության միջոցով են հաշվում սահմանային թույլատրելի արտանետումները	1. $(C + C_{\Phi})/C_o$ 2. $C/(C_o - C_{\Phi})$ 3. $C_o - (C + C_{\Phi})$
13.	Էկոլոգիական կառավարման համակարգի սերտիֆիկացման գործընթացի ո՞ր փուլն է իրականացնում էկոլոգ-աուդիտորը (ները)	1. Էկոլոգիական կառավարման համակարգի նախնական և տեղում զնահատման 2. Սերտիֆիկացման համար հայտի ընդունման և սերտիֆիկատի տրման վերաբերյալ որոշման կայացման 3. 1-ը և 2-ը միասին
14.	ՀՍ ԻՍՕ 14001 ստանդարտի պահանջներին համապատասխան էկոլոգիական կառավարման համակարգը ընդհանուր դեպքում պետք է բերի	1. Էկոլոգիական բնութագրերի բարելավմանը 2. Տնտեսական ցուցանիշների բարելավմանը 3. 1 և 2 միասին
15.	Դիցուկ շրջակա միջավայրի որևէ բաղադրիչում (օդ, ջուր, հող) վտանգավոր տարրի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան՝ $C_o=10$ պ.մ (պայմանական միավոր), իսկ ֆոնային կոնցենտրացիան՝ $C_{\Phi}=6$ պ.մ: Ի՞նչ պայմանի պետք է բավարարի վտանգավոր տարրի առաքման արտանետումների թույլատրելի կոնցենտրացիան՝ C -ն	1. $0 \leq C \leq 4$ 2. $6 \leq C \leq 10$ 3. Միայն $C=0,6$
16.	Էկոլոգիական կառավարման համակարգի ՀՍ ԻՍՕ 14001- 2005 ստանդարտի պահանջներին համապատասխանության բավարար պայմաններն են	1. Կազմակերպության էկոլոգիական ցուցանիշների բարելավումը 2. Տնտեսական ցուցանիշների բարելավումը 3. 1-ը և 2-ը միասին
17.	Էկոլոգիական կառավարման համակարգի ՀՍ ԻՍՕ 14001-2005 ստանդարտի պահանջներին համապատասխանության անհրաժեշտ պայմաններն են	1. Համակարգի կառուցվածքի, կառուցվածքային տարրերի և ենթատարրերի գործառույթների և իրենց միջև փոխադարձ կապերի, դրանց ներդրման և գործառնության համար անհրաժեշտ միջոցների առկայությունը 2. Օրենսդրական և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության պայմանը 3. 1-ը և 2-ը միասին
18.	Էկոլոգիական կառավարման համակարգի սերտիֆիկացման նպատակն է օգնել կազմակերպությանը	1. Նվազեցնել արտադրության բնապահպանական ծախսերը 2. Ամրապնդել կազմակերպության դիրքը շուկայում և նրա շահագրգիռ կողմերի մոտ և տալ նրան լրացուցիչ օգուտ ստանալու հնարավորություն 3. 1 և 2 միասին
19.	Կազմակերպության էկոլոգիամիտության բնութագրերը զնահատելու համար ի՞նչ պետք է իմանալ	1. Էներգիայի, նյութերի, ջրի, արտադրանքի մուտքային և ելքային հոսքերի քանակական արժեքները 2. Արտանետումների, թափոնների, արտահոսքերի վտանգավորության աստիճանները 3. 1-ը և 2-ը միասին

1	2	3
20.	Ո՞ր դեպքում արտադրանքին կարող է տրվել էկոլոգիական մակնշում՝ երբ	<ol style="list-style-type: none"> 1. Իր ամբողջ կենսացիկլում այն բավարարում է բնապահպանական օրենսդրության և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին 2. Իր կենսացիկլի միայն արտադրական փուլում այն բավարարում է 1-ում նշված պահանջներին 3. Իր ամբողջ կենսացիկլում կան նրա փուլերից մեկում կամ մի քանիսում այն բավարարում է 1-ում կամ 2-ում նշվածից ավելի խիստ պահանջների
21.	Ըստ ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021 ստանդարտի էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինը պետք է	<ol style="list-style-type: none"> 1. Ստանձնի պատասխանատվություն ենթակապալի պայմանագրով այլ մարմնին հանձնարարված բոլոր գործընթացների համար 2. Ստանձնի պատասխանատվություն հայտատուի լաբորատոր փորձարկումների համար 3. Չստանձնի պատասխանատվություն ենթակապալի պայմանագրով այլ մարմնին հանձնարարված բոլոր գործընթացների համար
22.	Էկոլոգիական կառավարման համակարգերի վերլուծությունների մուտքային տվյալները պետք է ներառեն.	<ol style="list-style-type: none"> 1. Ներքին աուդիտի արդյունքները, օրենսդրական և այլ պահանջներին համապատասխանության գնահատականները 2. Որակի նպատակները և արտադրանքին ներկայացվող պահանջները 3. Էկոլոգիական կառավարման համակարգերի և նրա գործընթացների արդյունավետության բարձրացումը
23.	Ղեկավարության կողմից վերլուծությունների տվյալները պետք է ներառեն	<ol style="list-style-type: none"> 1. Սերտիֆիկացման աուդիտի ծրագիրը 2. Արտաքին շահագրգիռ կողմերից ստացված տվյալները, ներառյալ բողոքները 3. Փաստաթղթերի փորձաքննության արդյունքները
24.	ՀՍՏ ԻՍՕ 14001- 2005 ստանդարտը հիմնված է	<ol style="list-style-type: none"> 1. Պլանավորում-կատարում-ստուգում-գործողություն (ՊԿՍԳ) կոչվող մեթոդաբանության վրա 2. Պլանավորում-ստուգում(ՊՍ) մեթոդաբանության վրա 3. Պլանավորում-գործողություն (ՊԳ) մեթոդաբանության վրա
25.	Էկոլոգիական կառավարման համակարգերի աուդիտի ծրագիրը պետք է ընդգրկի	<ol style="list-style-type: none"> 1. Էկոլոգիական կառավարման համակարգերի հետ կապված ամբողջ գործունեությունը 2. Էկոլոգիական կառավարման համակարգերի առավել կարևոր գործընթացները 3. Որակի կառավարման համակարգերի հետ կապված գործընթացները
26.	Ո՞վ է ապահովում մոնիթորինգի և չափումների իրականացումը	<ol style="list-style-type: none"> 1. Կազմակերպությունը 2. Լիազոր մարմինը 3. Սերտիֆիկացման մարմինը

1	2	3
27.	Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 14050 – 2007 ստանդարտի ինչպե՞ս է սահմանվում շրջակա միջավայրը	<p>1. Արտաքին միջավայր, որում գործում է կազմակերպությունը, ներառյալ միջավայրի տարրերը՝ օդը, ջուրը, հողը, բնական ռեսուրսները, բուսական և կենդանական աշխարհը, մարդը և այդ տարրերի միջև փոխազդեցությունը</p> <p>2. Արտաքին միջավայր, որում գործում է կազմակերպությունը</p> <p>3. Արտաքին միջավայր, որում գործում է կազմակերպությունը, ներառյալ միջավայրի տարրերը՝ օդը, ջուրը, հողը, բնական ռեսուրսները, բուսական և կենդանական աշխարհը</p>
28.	Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 14050 – 2007 ստանդարտի ինչպե՞ս է սահմանվում էկոլոգիական կառավարման համակարգը	<p>1. Կառավարման ընդհանուր համակարգի մասը, որը ներառում է կազմակերպության էկոլոգիական քաղաքականության մշակման, ներդրման, իրացման, վերլուծման և պահպանման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցվածքը, պլանավորումը, պատասխանատվությունները, մեթոդները, ընթացակարգերը, գործընթացներն ու ռեսուրսները</p> <p>2. Կառավարման ընդհանուր համակարգի մասը, որը ներառում է կազմակերպության էկոլոգիական քաղաքականության մշակման, ներդրման, իրացման, վերլուծման և պահպանման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցվածքը</p> <p>3. Կառավարման ընդհանուր համակարգի մասը, որը ներառում է կազմակերպության էկոլոգիական քաղաքականությունը</p>
29.	ՀՍՏ ԻՍՕ 14001- 2005 ստանդարտը կիրառելի է այն էկոլոգիական խնդիրների նկատմամբ, որոնց վրա	<p>1. Կազմակերպությունը կարող է ազդեցություն ունենալ</p> <p>2. Կազմակերպությունը չի կարող ազդեցություն ունենալ</p> <p>3. Կազմակերպությունը չի ընդունում</p>
30.	Քանի՞ կատեգորիայի են բաժանվում էկոլոգիական բնութագրի ինդիկատորները	<p>1. 4</p> <p>2. 2</p> <p>3. 5</p>
31.	Նշվածներից ո՞րն է հանդիսանում էկոլոգիական խնդիր	<p>1. Արտադրանք</p> <p>2. Թափոններ</p> <p>3. Վթարներ</p>
32.	Էկոլոգիական քաղաքականությունը պետք է ներառի	<p>1. Շարունակական բարելավման և աղտոտումների կանխարգելման պարտավորությունը</p> <p>2. Անհամապատասխան արտադրանքի ղեկավարումը</p> <p>3. Ներքին աուդիտի ծրագիրը</p>
33.	ԷԿՅ սերտիֆիկացման համար հայտատուն իրավունք ունի հայտ ներկայացնելու	<p>1. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>2. Իր կողմից ընտրված էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին</p> <p>3. Որակի տեսչություն</p>

1	2	3
34.	Ի՞նչ է իրենից ներկայացնում էկոլոգիական բնութագրի գնահատումը	<p>1. Էկոլոգիական բնութագրի գնահատումը՝ ինդիկատորների միջոցով ներքին կառավարման տեղեկատվական բնույթի գործընթաց է, որը հնարավորություն է տալիս կազմակերպության էկոլոգիական բնութագրի չափանիշի հետ համեմատել էկոլոգիական նախկին և ներկա բնութագրերը</p> <p>2. Էկոլոգիական բնութագրի գնահատումը՝ կառավարման գործընթաց է, որը հնարավորություն է տալիս կազմակերպության էկոլոգիական բնութագրի չափանիշի հետ համեմատել էկոլոգիական ներկա բնութագրերը</p> <p>3. Էկոլոգիական բնութագրի գնահատումը՝ կառավարման գործընթաց է, որը հնարավորություն է տալիս կազմակերպության էկոլոգիական բնութագրի չափանիշի հետ համեմատել էկոլոգիական նախկին բնութագրերը</p>
35.	Ո՞ր ստանդարտով է սահմանվում էկոլոգիական բնութագրի գնահատման ընդհանուր պահանջները	<p>1. ՅՍ ԻՍՕ 14001-2005</p> <p>2. ՅՍ ԻՍՕ 14031-2005</p> <p>3. ՅՍ ԻՍՕ 14050-2007</p>
36.	Ո՞վ պետք է իրականացնի էկոլոգիական կառավարման համակարգերի ներքին աուդիտը	<p>1. Կազմակերպությունը</p> <p>2. Սերտիֆիկացման մարմինը</p> <p>3. Բնապահպանության նախարարությունը</p>
37.	Ո՞ր ռիսկերի գնահատման հիման վրա կարող են ընտրվել էկոլոգիական բնութագրի ինդիկատորները	<p>1. Որոնք ըստ կազմակերպության ղեկավարության առնչվում են կազմակերպության որոշակի գործունեությանը, արտադրատեսակներին կամ ծառայություններին</p> <p>2. Որոնք առնչվում են անձնակազմի աշխատանքի անվտանգությանը</p> <p>3. Որոնք առնչվում են կազմակերպության ֆինանսական գործունեությանը</p>
38.	Էկոլոգիական կառավարման համակարգերի աուդիտի խումբը կազմվում է	<p>1. Աուդիտի խմբի ղեկավարից, աուդիտորներից և տեխնիկական փորձագետներից</p> <p>2. Աուդիտի խմբի ղեկավարից, աուդիտորներից, տեսուչներից</p> <p>3. Աուդիտի խմբի ղեկավարից, աուդիտորներից, ցանկություն հայտնած անձանցից</p>
39.	Ե՞րբ է իրականացվում սերտիֆիկացված էկոլոգիական կառավարման համակարգերի համապատասխանության հսկողությունը	<p>1. Առնվազն տարին մեկ անգամ</p> <p>2. 3 ամիսը մեկ անգամ</p> <p>3. 6 ամիսը մեկ անգամ</p>
40.	Ո՞ր ստանդարտով է ներկայացվում Որակի կառավարման համակարգերի և (կամ) էկոլոգիական կառավարման համակարգերի աուդիտի վերաբերյալ ղեկավար ցուցումները	<p>1. ՅՍ ԻՍՕ 19011-2005</p> <p>2. ՅՍ ԻՍՕ 14001-2005</p> <p>3. ՅՍ ԻՍՕ 9001-2008</p>
41.	Աուդիտի պլանը պետք է ներառի	<p>1. Աուդիտի նպատակները, աուդիտի չափանիշները և վկայակոչված փաստաթղթերը, աուդիտի ոլորտը</p> <p>2. Աուդիտի նպատակները, աուդիտի չափանիշները և վկայակոչված փաստաթղթերը, ղեկավար սկզբունքները</p> <p>3. Աուդիտի նպատակները, աուդիտի չափանիշները և վկայակոչված փաստաթղթերը, էկոլոգիական քաղաքականությունը</p>

1	2	3
42.	Ըստ ՋՍՏ ԻՍՕ 19011-2005 ստանդարտի էկոլոգիական կառավարման համակարգերի աուդիտի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքման մեթոդները ներառում են	1. Հարցումները, գործունեության դիտումները, փաստաթղթերի վերլուծությունը 2. Դիտարկումները, հարցումները, վերլուծությունները 3. Հարցադրումները, դիտարկումները, եզրակացությունները
43.	Էկոլոգիական բացասական ազդեցություններ են	1. Օդի աղտոտվածություն, բնական ռեսուրսների չարաշահում 2. Ջրի որակի բարելավում, հողի որակի բարելավում 3. Թափոնների վերօգտագործում, ջրի որակի բարելավում
44.	Արտադրական գործընթացում առաջացել է ուղղիչ և կանխարգելիչ գործողությունների կատարման անհրաժեշտություն: Ինչպիսի՞ գործողություն պետք է իրականացվի	1. Անհամապատասխանությունների որոշում, դրանց էկոլոգիական ազդեցությունների նվազեցում 2. Թափոնների վերօգտագործում 3. Արտադրանքի կենսացիկլի գնահատում
45.	Ո՞ր դեպքում կարող է կասեցվել էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկատը	1. Երբ սերտիֆիկացված կազմակերպության էկոլոգիական կառավարման համակարգը դադարում է համապատասխանել սերտիֆիկացման պահանջներին՝ ներառյալ կառավարման համակարգի արդյունավետության պահանջները 2. Երբ էկոլոգիական կառավարման համակարգերի համապատասխանության հսկողության ընթացքում հայտնաբերված են թույլատրելի անհամապատասխանություններ 3. Երբ մեկ ամսվա ընթացքում չեն վերացված համապատասխանության հսկողության ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունները
46.	Էկոլոգիական կառավարման համակարգերի սերտիֆիկացման համար անհրաժեշտ փաստաթղթերից են	1. Հայտատուի կառուցվածքային սխեման, հայտատուի ՀՀ բնապահպանական օրենսդրությամբ անհրաժեշտ փաստաթղթերը 2. Հայտատուի կառուցվածքային սխեման, որակի ձեռնարկը, անհրաժեշտ ելքային տվյալները 3. Հայտատուի կառուցվածքային սխեման, տվյալներ իր գործունեության մասին, հարցաթերթը, հայտատուի՝ որպես փորձարկման լաբորատորիա հավատարմագրման վկայագրի պատճենը
47.	Նշվածներից որոնք են հանդիսանում էկոլոգիական բնութագրի ինդիկատորներ	1. Օգտագործված հումքի և ծախսված էներգիայի քանակը, արտամետոնների քանակը 2. Կանաչապատման համար հատկացված հողատարածքը, բնապահպանական ծախսերը 3. Թափոնների վերաշրջանառության տոկոսը, ֆինանսական ռեսուրսները

1	2	3
48.	Էկոլոգիական պայմանի ինդիկատորների միջոցով կազմակերպությունը Էկոլոգիայի վերաբերյալ կարող է իրականացնել	<ol style="list-style-type: none"> 1. Նախագծում, տեղակայում, գործարկում (ներառյալ՝ վթարային վիճակները և աշխատանքում շեղումները) և կազմակերպության կառույցների և սարքավորումների տեխնիկական սպասարկում 2. Կազմակերպության գործառնությունների համար մուտքային հոսքերի ապահովում 3. Էկոլոգիական պայմանի և կազմակերպության գործունեության, դրա արտադրանքի ու ծառայությունների միջև հնարավոր փոխազդեցությունների հետազոտում
49.	Էկոլոգիական բնութագրի գնահատման պլանավորման համար կարևոր ելակետային բաղկացուցիչն է	<ol style="list-style-type: none"> 1. Կազմակերպության էկոլոգիական խնդիրների պլանավորումը 2. Էկոլոգիական բնութագրի ինդիկատորների ընտրությունը 3. Փոփոխության չափման կիրառելի հիմունքների մշակումը
50.	Գործառնության բնութագրի ինդիկատորները վերաբերվում են	<ol style="list-style-type: none"> 1. Կազմակերպության գործառնությունների համար մուտքային հոսքերի ապահովմանը 2. Էկոլոգիական կարևոր խնդիրների որոշմանը և կառավարմանը 3. Էկոլոգիական բնութագրի չափանիշների կիրառելիության գնահատմանը